# Հաշիվ ապրանքագիր
(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 1 | Նոյեմբեր | 2019 թ. |
| **[4] Մատուցման ամսաթիվը** | | |
| 23 | Հոկտեմբեր | 2019 թ. |

| [2] Սերիա | [3] Համար |
|---|---|
| Բ | 6783003076 |

| Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի | |
|---|---|
| Սերիա | Համար |
| | |
| **Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի դուրս գրման ամսաթիվ** | |
| | |

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
|---|---|---|
| | | |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

## Ծառայություններ մատուցողի (աշխատանքներ կատարողի) անձի

| | |
|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 7 6 8 2 6 3 6 6 |
| [9] Անվանումը | Անդրանիկ Ներսիսյան Անհատ ձեռնարկատեր (ԱՁ) |
| [10] Բանկային տվյալները | ՎՏԲ Հայաստան Բանկ Վայք մ/ճ — N 16035 008381400 |
| [11] Գտնվելու վայրը (հասցեն) | ՎԱՅՈՑ ՁՈՐ ՎԱՅՔ Այավերդյան 55 |
| [12] Լրացուցիչ տվյալներ | |

## Ծառայություններ (աշխատանքներ) ստացողի անձի

| | |
|---|---|
| [13] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 2 6 3 1 2 6 3 |
| [14] Անվանումը | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ |
| [15] Բանկային տվյալները | ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն — N 900011000834 |
| [16] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 |
| [17] Լրացուցիչ տվյալներ | |

| [18] Ում միջոցով | Անուն, ազգանուն | | |
|---|---|---|---|
| | Լիազորագիր | Համար | |
| | | Ամսաթիվ | |

[19] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| NN Ը/Կ | Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը) | Չափի միավորը | Ընդհանուր ծավալը կամ ժամանակահատվածը | Միավորի գինը | Արժեքը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Քարտեզագրման ( չափագրման ) աշխատանքներ | փաթեթ | 1 | 40000 | 40000 |
| Ընդամենը | | | | | 40000 |

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ NERSISYAN ANDRANIK 1310840306

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ծառայություն (աշխատանք) ստացող՝

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

01/11/2019 21:35:33

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

մասնագետ նշանակելու մասին

22-ը հոկտեմբերի 2019թ. ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության ընդհանուր բնույթի և ընտրական հանցագործությունների քննության վարչության ՀԿԳ ավագ քննիչ Ա.Գեղամյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 61202119 քրեական գործի նյութերը.

# Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 214-րդ հոդվածի 2-րդ մասով, 308-րդ հոդվածի 2-րդ մասով, 314-րդ հոդվածով և 325-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով քննվող թիվ 61202119 քրեական գործի նախաքննության ընթացքում ստացվել են փաստական տվյալներ հետևյալի մասին.

ՀՀ կառավարության 20.04.2006թ. «Որոտան-Արփա-Սևան թունելի պահպանման, տեխնիկական վիճակի բարելավման և նորոգման 2006 թվականի ծրագիրը հաստատելու մասին» N 549-Ա որոշմամբ հաստատվել է Եղեգիսի շինարարական տեղամասի վերականգնման՝ 150.000.000 դրամի շինարարական աշխատանքների կատարման ծրագիրը:

ՀՀ Վայոց ձորի մարզի Վարդահովիտ համայնքի տարածքում՝ Եղեգիսի կիրճում, 2,36 հա հողատարածության վրա, համաձայն ՀՀ կառավարության N 549-Ա որոշման, 2006-2007թթ.-երին պետական բյուջեի միջոցներով կառուցվել են երկհարկանի վարչա-կենցաղային շենք՝ 666,8 քմ, էլեկտրական ենթակայանի շենք՝ 46,4 քմ, լիցքավորման շենք՝ 108,6 քմ, ճնշակայանի շենք՝ 237,7 քմ, արհեստանոցի շենք՝ 265,5 քմ, ցեմենտ-բետոնի շաղախման հանգույց՝ 85,9 քմ և հիդրոհանգույցի 2 շենքեր՝ 64,5 և 18,4 քմ մակերեսներով:

Նույն ժամանակահատվածում «Որոտան-Արփա-Սևան» հիդրոհամալիրը հաշվառված է եղել ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեի «Որոտան-Արփա-Սևան» թունելների շահագործման վարչություն» պետական հիմնարկի (ՈԱՍԹՇՎ ՊՀ) հաշվեկշռում և շինարարական աշխատանքների ավարտից հետո Եղեգիսի շինարարական բազայի բոլոր շենք-շինությունները նույնպես պետք է հաշվառվեին նշված պետական հիմնարկի հաշվեկշռում:

ՈԱՍԹՇՎ ՊՀ-ն համապատասխան գրություններով 15.08.2008թ. և 30.10.2008 դիմել է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե՝ օրենքով սահմանված կարգով ՊՀ-ին ամրացված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման աշխատանքների կատարման համար:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի տեղակալի 07.11.2008թ. ՆԱՄ-4/4865 գրությամբ հայտնվել է, որ կոմիտեի

աշխատակազմի Եղեգնաձորի տարածքային ստորաբաժանման կողմից իրականացվել են անշարժ գույքի չափագրման և տեղազննման աշխատանքներ, որի արդյունքում պարզվել է, որ ՈԱՍԹՇՎ ՊՀ-ի կողմից կառուցված շենք-շինությունները փաստացի գտնվում են Վարդահովիտ համայնքի բնակիչ Ագնեսա Նուշերվանի Ստեփանյանին սեփականության իրավունքով պատկանող հողատարածքի վրա, որի նկատմամբ 29.08.2006թ. Եղեգնաձորի տարածքային ստորաբաժանման կողմից իրականացվել է իրավունքի պետական գրանցում: Նշված պատճառաբանությամբ էլ մերժվել է վերոնշյալ անշարժ գույքերի պետական գրանցումը:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ նախաքննությամբ անհրաժեշտություն է առաջացել պարզել, թե «Արփա-Սևան» ԲԲ ընկերության Եղեգիսի շինարարական տեղամասի շենք-շինությունները գտնվում են արդյոք նախկինում Ագնեսա Ստեփանյանին պատկանող 2,0 հա մակերեսով հողակտորի (կադաստրային ծածկագիր՝ 10-041-0201-0056), թե այլ (այդ թվում Վարդահովիտ համայնքին պատկանող) հողակտորի վրա, 25.07.2019թ.-ի որոշմամբ նշանակվել է մասնագիտական ստուգում՝ կադաստրային չափագրում:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով, որ Անդրանիկ Նվերի Ներսիսյանն ունի համապատասխան մասնագիտական գիտելիքներ և քարտեզագրողի, գեոդեզիստի, չափագրողի, հողաշինարարի որակավորման վկայական, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ և 84-րդ հոդվածներով.

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 61202119 քրեական գործով Անդրանիկ Նվերի Ներսիսյանին (ծնված՝ 03.10.1984թ., նույնականացման քարտ՝ 000506675, «Անդրանիկ Ներսիսյան» Ա/Ձ /պետական գրանցման համար՝ 44.86352, ՀՎՀՀ 76826366/, քարտեզագրողի, գեոդեզիստի, չափագրողի, հողաշինարարի որակավորման վկայական՝ հմ.0141) նշանակել մասնագետ և հանձնարարել կատարել նշանակված մասնագիտական ստուգումը՝ կադաստրային չափագրումը:
2. Որոշումը ծանոթացնել Ա.Ներսիսյանին:

ՀԿԳ ավագ քննիչ՝ Ա.Գեղամյան